ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 ապրիլի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

50
(2716)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 171

Մարտի 30-ին կառավարության հերթական նիստում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսեց Լաչինի միջանցքում տեղի ունեցած գործընթացներից եւ հայտարարեց, որ դիրքային որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել: «Հայկական դիրքերի որեւէ փոփոխություն այս ամենի արդյունքում տեղի չի ունեցել՝ այն տարբերությամբ, որ մենք մտադիր ենք խնդրո առարկա հատվածի պահպանությունը, ի տարբերություն նախկինի, իրականացնել սահմանապահ զորքերի միջոցով»,- հայտարարել էր Փաշինյանը: Փաշինյանի այս հայտարարությունից ժամեր անց Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն տարածեց, որով, ըստ էության, հերքեց Փաշինյանին: Մասնավորապես, հայտարարության մեջ դրույթ կար, որ սահմանի որոշ տեղերում ադրբեջանական կողմը, չսպասելով նախապես պայմանավորված ճշգրտումներին, սկսել է դիրքավորվել եւ իրականացնել ինժեներական աշխատանքներ: ԱԱԾ-ն նշել է, որ, հայկական կողմի հաշվարկներով, հինգ այդպիսի կետ կա, որտեղ ադրբեջանական կողմը սահմանից 100-300 մետր ավելի առաջ է տեղակայվել: Ստացվում է, որ ԱԱԾ-ն, այնուամենայնիվ, խոսեց դիրքային փոփոխության մասին, ինչը Նիկոլ Փաշինյանը փորձում էր հերքել: Այսպիսով, Նիկոլ Փաշինյանն էլի խաբել է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ շուրջ 6 ամիս կալանքի տակ գտնվող դատավոր Արուսյակ Ալեքսանյանի մասով դիմում կուղարկվի Մարդու իրավունքների եվրոպական դատարան: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մեր ունեցած այս տեղեկությունը հաստատեց նրա պաշտպան Հովսեփ Սարգսյանը՝ հավելելով, որ անձեռնմխելիությունից զրկելու եւ խափանման միջոց կալանքի հարցերով է դիմում ներկայացվելու ՄԻԵԴ: Նշենք, որ ԱԱԾ-ն դատավորին մեղադրում է ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու եւ պաշտոնեական լիազորություններն անցնելու համար: Նշենք, որ Արուսյակ Ալեքսանյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում: Հիշեցնենք, որ դատավոր Ալեքսանյանը մամուլի ուշադրության կենտրոնում ամռանն էր հայտնվել, երբ կալանավորել էր գործի քննության հենց առաջին նիստին հանկարծամահ եղած պրոդյուսեր, իշխանության քննադատ Արմեն Գրիգորյանին:

ՀՀ իշխանությունները երեկ ամբողջ օրը որեւէ կերպ չեն անդրադարձել ադրբեջանցիների կողմից դրսեւորված նոր սանձարձակ ու սադրիչ քայլերին: Մասնավորապես, երեկ 27 քաղաքացիական անձինք ռուսական խաղաղապահների ուղեկցությամբ Գորիս քաղաքից ուղեւորվում էին Ստեփանակերտ, սակայն Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի արգելափակված հատվածում ադրբեջանցիները արգելափակել էին քաղաքացիական անձանց տեղափոխող մեքենաները: Ընդ որում, Արցախի պաշտոնյաների հավաստմամբ, ադրբեջանցիները ներխուժել են մեքենաներից մեկը, որի հետեւանքով քաղաքացիական անձանցից 4-ի ինքնազգացողությունը վատացել է, նրանցից 3-ը ուշաթափվել են: Չնայած տեղի ունեցածին՝ Հայաստանի իշխանությունների կողմից որեւէ հայտարարություն չկա: Նախորդ անգամներում այսպիսի դեպքերում գոնե հայտարարություն էր տարածում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, սակայն այս անգամ նրանք էլ են լուռ: Նույնիսկ ՔՊ-ի կողմից առաջադրված ՄԻՊ-ի թեկնածուն է լռում: Այս ամենին զուգահեռ՝ վերջին օրերին ՔՊ-ն շոուներ է կազմակերպում ԱԺ-ում, որոնք արվում են հենց Նիկոլ Փաշինյանի հրամանով եւ նպատակ ունեն շեղել հանրության ուշադրությունը նոր գործընթացներից, որոնք սպառնում են Հայաստանին եւ Արցախին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մի շարք փաստաբաններ, որոնց վարույթում առկա են խուլիգանության հիմքով դատարաններում կամ նախաքննական մարմիններում առկա գործեր, բարձրացնելու են վերոնշյալ գործերի կարճման հարցը: Ի՞նչն է փաստաբանների այս գործընթացի հիմքը: Բանն այն է, որ փաստաբանները պատրաստվում են դատարաններում եւ նախաքննական մարմիններում օրինակ բերել մարտի 4-ին Ազգային ժողովում ՔՊ-ական պատգամավորների վարքը ու, մասնավորապես, պատգամավոր Արթուր Հովհաննիսյանի հնչեցրած սպառնալից արտահայտություններն ու վիրավորանքները, ինչին իրավապահների կողմից մինչ օրս ընթացք չի տրվել: Փաստաբանները պահանջելու են կամ իրենց պաշտպանյալների մասով քրեական վարույթը կարճել, կամ ընտրովի արդարադատություն չիրականացնել: Հիշեցնենք, որ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստը ապրիլի 4-ին անցավ շատ լարված մթնոլորտում, որի հեղինակները Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներն էին եւ հատկապես Արթուր Հովհաննիսյանը: Խոսքը նույն այն պատգամավորի մասին է, որ 2017 թվականին բերման է ենթարկվել ոստիկանություն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով: Ավելին՝ անգամ քրեական գործ է հարուցված եղել, որը հետագայում կարճվել է:

ՀԱՍԿԱՆԱԼԻ ՉԷ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՄԵԿ ՕՐԱԿԱՐԳ ՈՒՆԻ

Ադրբեջանցիները ապրիլի 4-ին հերթական ահաբեկչական քայլն են իրականացրել արցախցիների նկատմամբ:

Լաչինի միջանցքում ադրբեջանցի կեղծ «էկոակտիվիստները» արգելափակել էին ՌԴ խաղաղապահների մեքենան, որով 27 անձ Գորիսից վերադառնում էր Ստեփանակերտ: Չորս կանանց ինքնազգացողությունը դրանից վատացել էր, նրանցից 3-ը ուշագնաց էին եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը միջադեպի վերաբերյալ զրուցել է ԱԺ «Արդարություն» կուսակցության պատգամավոր Մետաքսե Հակոբյանի հետ:

-Տիկի՛ն Հակոբյան, ի՞նչ մանրամասներ կպատմեք միջադեպից:

-Արցախցի կանանց (որոնք ռուս խաղաղապահների ուղեկցությամբ տեղափոխվում էին) ադրբեջանցիները կանգնեցնում են ու թույլ չեն տալիս շարունակել ճանապարհը: Կանանցից մի քանիսի ինքնազգացողությունը վատացել է, ադրբեջանցիներն էլ թույլ չեն տվել, բացի իրենց շտապօգնության մեքենայից, մեկ այլ օգնություն: Ռուսական կողմը դա ընդունել է, որպեսզի այդ կանանց կարողանան արագ բժշկական կենտրոն տեղափոխել:

-Այսինքն՝ կանանց ադրբեջանական շտապօգնության մեքենայո՞վ են տեղափոխել հիվանդանոց:

-Այո՛. մի մասին հետ են ուղարկել, իսկ այն 4 կանանց, որոնց ինքնազգացողությունը վատացել էր, իրենց շտապօգնության մեքենաներով են տեղափոխել Ստեփանակերտի հիվանդանոց: Այսինքն՝ թշնամին հստակ իր օրակարգով է շարժվում: Եթե ուշադիր լինենք, երեկ էլ Բայրամովը հայտարարեց, որ հաստատակամ են իրենց որոշման մեջ. պետք է լինի ինտեգրում, համակեցություն, եւ իրենք ամեն ինչ անելու են դրա համար:

Վերջին միջադեպն էլ հենց դրա ապացույցն էր: Երբ որոշ ժամանակ առաջ նման միջադեպ եղավ արցախցի երեխաների հետ, այն ժամանակ իրենք այլ քաղաքականություն էին վարում, իրենց պահանջն իբրեւ թե բնապահպանական էր, բայց հիմա որեւէ մեկը չի հիշում այդ բնապահպանական պահանջի մասին, հիմա պահանջն արդեն հստակ քաղաքական է, ինչի մասին մենք վաղուց ասում էինք: Ցավոք սրտի, ինչպես միշտ, թե՛ Հայաստանի իշխանությունները, թե՛ Արցախի իշխանությունները մտան այդ օրակարգի մեջ եւ գնացին իբրեւ թե հումանիտար խնդիրներ լուծելու ճանապարհով, բայց դրանով ամեն ինչ փակուղի մտցրին: Բոլորն էլ հստակ գիտեն, որ Ադրբեջանը միայն մեկ օրակարգ ունի. դա համակեցությունն է. ես ինտեգրում բառը չեմ էլ ուզում օգտագործել, քանի որ ադրբեջանցիների քայլերը որեւէ կերպ չեն տեղավորվում ինտեգրման գաղափարում, այլ տանում են արցախցիների ոչնչացման:

-Տիկի՛ն Հակոբյան, երեկ Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանն իր ֆեյսբուքյան էջում գրել էր, որ Արցախից Հայաստան հնարավոր կլինի մեկնել միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Նա նշել է, որ տեղափոխումը հնարավոր կլինի միայն ՌԴ խաղաղապահների միջոցով: Իրավիճակն իսկապե՞ս այդ աստիճան ծայրահեղ է:

-Ինձ համար անհասկանալի չէր այդ հայտարարության իմաստը: Ստացվում է այնպես, որ մենք 4 ամիս շրջափակման մեջ չէի՞նք, կարողանո՞ւմ էինք տեղաշարժվել, բայց հիմա հնարավոր էր: Արդեն 4 ամիս է՝ որեւէ բնակիչ, եթե նա իշխանական նեղ շրջանակից չէ, չի կարող տեղաշարժվել: Մենք 4 ամիս շրջափակման մեջ ենք եղել եւ շարունակում ենք մնալ, իսկ թե ինչ էր ուզում ասել պետնախարարը, հասկանալի չէր:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԵՐՔԵԼ Է

ԽԻՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը հերքել է տարածվող լուրերը, թե ՌԴ խաղաղապահները տարհանում են Արցախի բնակչությանը կամ մեծ թվով խաղաղացիների են Արցախից Հայաստան տեղափոխում: Ներսիսյանը նաեւ հայտնել է, որ այսուհետ Արցախից Հայաստան մեկնելը հնարավոր կլինի խիստ անհրաժեշտության դեպքում:

Գուրգեն Ներսիսյանն այդ մասին գրառում է արել սոցցանցի իր էջում:

«Այսուհետ Արցախից Հայաստան հնարավոր կլինի մեկնել խիստ անհրաժեշտության դեպքում՝ բացառապես ռուսական խաղաղապահ զորախմբի հետ համագործակցության ապահովման կենտրոնին նախապես դիմելու եղանակով եւ կենտրոնի թույլտվությամբ:

Արցախը Հայաստանին կապող ճանապարհը Ադրբեջանի կողմից արգելափակելուց հետո տեւական ժամանակ արցախցիները զրկված էին ամենատարբեր կարիքների համար Արցախից Հայաստան մեկնելու հնարավորությունից:

Հաշվի առնելով մարդկանց կյանքում անընդհատ ծագող խնդիրները /ՀՀ-ում հարազատի մահ, հուղարկավորություն, կիսված ընտանիքների՝ ՀՀ-ում գտնվող ընտանիքի անդամի ծանր հիվանդություն, վիրահատություն եւ այլն/ եւ լարվածության աճը՝ վերջին օրերին ռուս խաղաղապահները որոշակի պարբերականությամբ սկսել են Արցախից Հայաստան տեղափոխել նման խնդիրների առաջ կանգնած քաղաքացիների:

Վերոնշյալ գործընթացը վերահսկողության տակ պահելու եւ ճանապարհի արգելափակված հատվածում մեր քաղաքացիներին հնարավոր ադրբեջանական սադրանքներից պաշտպանելու նպատակով այսուհետ Արցախից Հայաստան հնարավոր կլինի մեկնել խիստ անհրաժեշտության դեպքում, բնականաբար, ռուս խաղաղապահների միջոցով՝ բացառապես ռուսական խաղաղապահ զորախմբի հետ համագործակցության ապահովման կենտրոնին նախապես դիմելու եւ կենտրոնի թույլտվությամբ: Ինչ վերաբերում է առողջական խնդիր եւ բժշկական օգնության կարիք ունեցող անձանց, ապա նրանց տեղափոխությունը ՀՀ կկազմակերպվի Կարմիր խաչի միջազգային կոմիտեի արցախյան ներկայացուցչության միջոցով՝ Արցախի առողջապահության նախարարության ցուցմամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ ռուս խաղաղապահների կողմից Արցախի բնակիչներին տարհանելու կամ մեծ թվով արցախցիների՝ Հայաստանի Հանրապետության տեղափոխելու մասին լուրերը իրականությանը չեն համապատասխանում. դրանք ադրբեջանական տեղեկատվական գրոհների հերթական դրսեւորումներն են»,- գրել է Ներսիսյանը:

ԴԻՄԵԼ ԵՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ

Ադրբեջանցիները ապրիլի 4-ին հերթական ահաբեկչական քայլն են իրականացրել արցախցիների նկատմամբ՝արգելափակելով ՌԴ խաղաղապահների մեքենան, որով 27 արցախցիներ Գորիսից վերադառնում էին Ստեփանակերտ: Արցախցի չորս կանանց ինքնազգացողությունը դրանից վատացել էր, նրանցից 3-ը ուշագնաց էին եղել:

Մինչ այս պահը որեւէ երկիր կամ միջազգային կառույց չի արձագանքել ադրբեջանի հերթական հայատյաց քայլին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանն ասաց, որ միջադեպի մասով դիմել է միջազգային տարբեր կառույցների, փաստեր է ներկայացրել, սակայն դեռեւս արձագանք չկա.

«Անընդհատ էլ դիմում ենք միջազգային տարբեր կազմակերպությունների՝ ոչ միայն երեկվա միջադեպի հետ կապված: Ինչ սկսվել է շրջափակումը, շուրջ տասը զեկույց եմ հրապարակել, որոնք անմիջապես ուղարկվել են միջազգային կազմակերպություն: Ցանկացած տեղեկություն, որը հրապարակվում է նաեւ սոցիալական կայքերում, հրապարակվում է մեր պաշտոնական էջում, հատուկ տեղեկագրի տեսքով ուղարկվում է միջազգային կազմակերպությունների:

Կոնկրետ երեկվա միջադեպի հետ կապված եւս դիմումներ ուղարկել եմ:

Այս պահի դրությամբ կոնկրետ միջադեպի մասնակիցներից շարունակում ենք ստանալ փաստեր, տեղեկություններ, որոնք ամփոփվելուց հետո տեղեկանքի տեսքով, արդեն մարդկանց վկայություններով, թե ինչ զգացողություններ են եղել, ինչպես է մեքենան կանգնեցվել, ինչպես են ադրբեջանցիները մուտք գործել, ինչպես է մեքենան կանգնեցվել, հավաքագրվել են եւ նկարներով, տեսանյութերով ուղարկվել են միջազգային կազմակերպություններին, բայց դեռ արձագանք»,-ասաց նա: Իսկ թե ինչով է պայմանավորում կոնկրետ վերջին միջադեպի հետ կապված քար լռությունը, Գեղամ Ստեփանյանն ասում է.

«Զեկույցները մինչեւ տեղ են հասնում, մինչեւ ծանոթանում են նյութերին, ժամանակ է այս ամենը պահանջում»:

Ստացվում է՝ միջազգային հանրության անտարբերության եւ քար լռության պայմաններում Արցախի շուրջ 120 հազար բնակիչ գրեթե ամեն օր ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումների է ենթարկվում բռնատիրական Ադրբեջանի կողմից:

Գրեթե ամեն օր մարդու իրավունքների եւ ժողովրդավարության մասին աղաղակող երկրները եւ միջազգային կազմակերպությունները շարունակում են լռել Ադրբեջանի անմարդկային արարքների մասին:

ՆՈՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ

2023 թվականի ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Արտակարգ իրավիճակների նախարարությանը կհատկացվի 23 մլն 494 հազար դրամ Թուրքիայի եւ Սիրիայի երկրաշարժից տուժածներին սնունդ եւ անկողնային պարագաներ տրամադրելու նպատակով:

Նշենք նաեւ, որ այս տարվա փետրվարին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Արտակարգ իրավիճակների նախարարությանը կրկին հատկացվել էր 157 մլն 816 հազար դրամ:

Ավերիչ երկրաշարժներից հետո Հայաստանի կողմից երկու անգամ Թուրքիա մարդասիրական օգնություն է ուղարկվել: Այն հնարավոր է եղել իրականացնել 1993 թվականից փակված Մարգարայի կամրջով:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ զբաղվող իշխանության անդամները նախորդ տարվա դեկտեմբերին երկու անգամ հանդիպում են ունեցել հենց Մարգարայի կամրջի մոտ, ուսումնասիրել կամրջի վիճակը, անգամ նմուշառում անցկացրել եւ եկել այն եզրակացության, որ այն պիտանի է:

ԱՐԵՎԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ

Լիտվական «ՋեյէսՍի Սոլիթ Թեքնիքս» ընկերությունը արեւային վահանակներ ու այլ սարքավորումներ կհանձնի ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի, եւ Կոտայքի մարզերում գործող ոչ առեւտրային 19 շահառու կազմակերպությունների: ArmLur.am-ը տեղեկացավ, որ, նախագծի հիմնավորման համաձայն, այն կնպաստի վերականգնվող էներգիայի ենթակառուցվածքների տարածմանը, ինչպես նաեւ շրջակա միջավայրի աղտոտման եւ կլիմայի փոփոխության խնդիրների լուծմանը:

Այս որոշումն ընդունվել է կառավարության վաղվա նիստի ժամանակ: Այս որոշումը պայմանավորված է «Հայկական դպրոցական համայնքներում արեւային կայանների կառուցման եւ տեղական գործընկերներին արեւային էներգիայի ոլորտում լիտվական փորձի փոխանցման միջոցով շրջակա միջավայրի աղտոտման եւ կլիմայի փոփոխության խնդիրները լուծելու» ծրագրով:

Ծրագիրը ֆինանսավորում է Լիտվայի շրջակա միջավայրի նախարարության Բնապահպանական նախագծերի կառավարման գործակալությունը, եւ այն հանդիսանում է Լիտվայի զարգացման համագործակցության ծրագրի մաս:

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կողմից Մեքսիկայի Սենատի անդամներ Սեսիլիա Մարգարիտա Սանչես Գարսիան, Ալեխանդրա դել Կարմեն Լեոն Գաստելումը եւ Ինդիրա Կեմպիս Մարտինեսը պարգեւատրվել են ԱԺ նախագահի հուշամեդալով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Մեքսիայի Սենատի անդամները պարգեւատրվել են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման գործում ներդրած նշանակալի ավանդի համար:

ՆԻՍՏԻՑ ՀԵՏՈ

ԴԻՄԵԼՈՒ ԵՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Ընդդիմադիրները դիմելու են գլխավոր դատախազին՝ ՔՊ-ական պատգամավորների կողմից երեկ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստում հնչեցրած սպառնալիքների հարցով: Այս մասին երեկ՝ մարտի 5-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում ասաց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Երեկվա տեղի ունեցածը պատմական խայտառակություն էր: Ես համարում եմ, որ ՄԻՊ-ի ընտրությունը այդպիսի մթնոլորտում չպետք է անցներ, որովհետեւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները ակնհայտ ոտնահարեցին մյուս թեկնածուի իրավունքները, խախտեցին ԱԺ պատգամավորի էթիկայի վարքականոնի բոլոր հնարավոր նորմերը եւ սահմանափակեցին խոսքի ազատությունը:

Առաջին քայլը, որն արվելու է, պետք է գլխավոր դատախազին գրություն ուղարկենք եւ պահանջենք քրեաիրավական գնահատական: Արթուր Հովհաննիսյանի արարքներում կար հանցակազմ, եւ նա պետք է պատժվի: Այն սպառնալիքները, որոնք նա անթաքույց հնչեցնում էր պատգամավորների ներկայությամբ թեկնածուի հասցեին, այդ թվում՝ իմ հասցեին, նա պետք է պատժվի»,- նշեց Թովմասյանը:

Նա հայտնեց՝ երկրորդ քայլն այն է, որ ինքը միջազգային իր գործընկերներին այդ հանձնաժողովի նիստի սղագրությունը թարգմանելու եւ ուղարկելու է, որպեսզի հասկանան, թե ժողովրդավարական Հայաստանում ՄԻՊ-ի պաշտոնում ինչպիսի մթնոլորտում է առաջադրվում իշխանության թեկնածուն, կամ ինչ մթնոլորտում է մերժվում ընդդիմության թեկնածուն. «Միշտ կարելի է մերժել անցանկալի թեկնածուին, բայց դա անել ավելի քաղաքակիրթ մեթոդների կիրառմամբ: Մենք գործ ունեինք փողոցային վարքագծի դրսեւորման հետ: Ես խնդրելու եմ միջազգային իմ գործընկերներին տալ գնահատական եւ բոլոր հնարավոր զեկույցներում զետեղել, թե ինչպիսին չպետք է լինի պատգամավորը»:

Անդրադառնալով այդ հարցով Էթիկայի հանձնաժողովի ձեւավորելուն՝ Թովմասյանը նշեց. «Էթիկայի հանձնաժողովի մասով մենք դեռ քննարկումները շարունակում ենք, որովհետեւ մի քիչ նպատակահարմարության հարց կա, քանի որ Էթիկայի հանձնաժողովի ձեւավորումը արդեն իսկ կախված է ՔՊ-ի քվեարկությունից, այսինքն՝ իրենք կարող են քվեարկել ստեղծել եւ կարող են չստեղծել: Այդ հանձնաժողովի ձեւավորումից հետո էլի պատիժ չի լինելու: Մենք հակված ենք նաեւ այդ տարբերակին եւ մտածում ենք նաեւ այդ գործիքակազմը կիրառել»:

Անդրադառնալով ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եւ քաղաքացու միջեւ տեղի ունեցած միջադեպին՝ պատգամավորն ասաց. «Մոտ մեկուկես տարի առաջ Ալեն Սիմոնյանի պաշտոնավարման նպատակահարմարության մասով ընդդիմադիր խմբակցությունները դրել են օրինագիծ շրջանառության մեջ, եւ դակարող է քննարկվել ամեն պահի: ԱԺ նախագահի կողմից ցուցաբերված վարքագիծն անհարիր է բարձրաստիճան պաշտոնյային: Կարեւոր է, որ պետական պաշտոնյան խիստ զսպվածություն ցուցաբերի անգամ նման ծայրահեղ իրավիճակներում: Նա արդեն պետք է պաշտոնանկ արված լիներ»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԺԱՄԱՆԵԼ Է ԼԵՀԱՍՏԱՆ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին կնոջ հետ պաշտոնական այցով ժամանել է Լեհաստան. այս մասին հայտնել է Ուկրաինայի ղեկավարի մամուլի քարտուղար Սերգեյ Նիկիֆորովը:

«Ուկրաինայի նախագահը եւ առաջին տիկինը սկսել են պաշտոնական այցը Լեհաստան: Վլադիմիր Զելենսկիի այցի ծրագիրը ներառում է, մասնավորապես, բանակցություններ նախագահ Անջեյ Դուդայի, վարչապետ Մատեուշ Մորավեցկիի հետ, երկկողմ փաստաթղթերի ստորագրում»,- երեկ գրել էր սոցիալական ցանցի իր էջում:

Նիկիֆորովը մանրամասնել է, որ ուկրաինալեհական բիզնես ֆորումի շրջանակներում Զելենսկին կհանդիպի լեհական բիզնեսի ներկայացուցիչների, Սեյմի եւ Սենատի մարշալների, կամավորների եւ փրկարարների, ինչպես նաեւ Ուկրաինային սահմանակից քաղաքների քաղաքապետների հետ: Երեկոյան Զելենսկին ուղերձով կդիմի լեհերին եւ Լեհաստանում ապրող ուկրաինացիներին:

ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ

Օրենսդրության համաձայն՝ բոլոր իրավաբանական անձինք, անկախ կազմակերպաիրավական տեսակից, պետք է յուրաքանչյուր տարի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնեն իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

Արդարադատության նախարարությունից հայտնում են, որ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պետական գրանցում ստացած եւ չլուծարված 117 կուսակցություններից միայն 7-ն են ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

Իրավաբանական անձանց կրկին զգուշացնում ենք, որ սահմանված պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իրավաբանական անձինք կարող են ենթարկվել վարչական պատասխանատվության:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը երեկ՝ ապրիլի 4-ին, ընդունել է Իտալիայի Հանրապետության արտաքին գործերի եւ միջազգային համագործակցության փոխնախարար Էդմոնդո Չիրիելիի գլխավորած պատվիրակությանը. այս մասին սոցիալական ցանցի իր էջում գրել է Քերոբյանը:

«Հյուրերին ներկայացրել եմ Տնտեսության արդիականացման միջոցառումը եւ «Գագարին» ներդրումային նախագիծը, որոնց շրջանակներում եւս կարող ենք ծավալել արդյունավետ համագործակցություն»,- նշել է նախարարը:

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԻ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինչական կոմիտեի Արմավիրի մարզային ֆինչական վարչությունում իրականացված ֆինչական եւ վարութային գործողությունների արդյունքում ղարզվել են Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի 45-ամյա բնակչի կողմից իր կնոջ ծնողների սպանության դեպքի բոլոր հանգամանքները: Նախաքննությունն ավարտվել է:



Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 45-ամյա հիշյալ տղամարդը, իմանալով, որ կնոջ եղբայրը՝նույն գյուղի 41-ամյա բնակիչը, իր հասցեին վիրավորական արտահայտություններ է հնչեցրել, 2022թ. ապրիլի 21-ին՝ ժամը 23:30-ից 00:00-ի սահմաններում, իր ավտոմեքենայով գնացել է նույն գյուղում գտնվող՝ կնոջ ծնողների տան մոտ: Կնոջ հայրը դուրս է եկել տանից, վիճաբանել նրա հետ, հայհոյանքներ հնչեցրել եւ ձեռքով ու քարերով հարվածել վերջինիս ավտոմեքենային:

Լսելով վիճաբանության ձայները՝ տանից դուրս են եկել նաեւ 45-ամյա տղամարդու կնոջ մայրն ու եղբայրը: Այդ ընթացքում տղամարդը նախապես իր հետ վերցրած, իր անվամբ հաշվառված «ՄՌ-155» մոդելի, 12 տրամաչափի որսորդական ողորկափող հրացանը ավտոմեքենայում լիցքավորել է 5 փամփուշտով եւ հիշյալ անձանց ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ 5 կրակոց է արձակել սկզբից կնոջ հոր, այնուհետեւ՝ մոր եւ եղբոր ուղղությամբ: Դրա հետեւանքով ստացած՝ կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներից կնոջ հայրը տեղում մահացել է, մայրը տեղափոխվել է «Արմավիր» բժշկական կենտրոն, որտեղ ապրիլի 23-ին՝ ժամը 04:10-ի սահմաններում, մահացել է: Կնոջ եղբոր սպանությունը, իր կամքից անկախ հանգամանքներով, չի իրագործվել, քանի որ վերջինս գտնվել է տան դարպասների դիմաց կայանած «Գազել» մակնիշի ավտոմեքենայի հետնամասում եւ ստացել առողջության թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 45-ամյա տղամարդուն վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ գործը դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԱԹԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 2-ին՝ ժամը 4:50-ին, Երեւանի պարեկները Բրյուսովի փողոցում, գողության փորձ կատարելու հիմնավոր կասկածանքով, ձերբակալել եւ ոստիկանության Կենտրոնական բաժին են տեղափոխել Արմավիրի մարզի Զարթոնք գյուղի բնակիչ երեք տղամարդու՝ իրենց վարած «Ֆորդ Տրանզիտ» եւ «Նիսան Տիդա» մակնիշի մեքենաներով: Հիմնավոր կասկածն այն էր, որ նրանք փորձում էին շինարարական տարածքից գողանալ երկաթյա ամրաններ, ինչը նկատելով՝ պարեկները միջամտել ու բռնել էին նրանց:

Մեքենաները տեղափոխվել են բաժնի պահպանվող հատուկ տարածք, իսկ 43-ամյա, 32-ամյա եւ 35-ամյա զարթոնքցի տղամարդիկ եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Հետագա միջոցառումներով պարզվել է, որ նրանք նախկինում եւս նման գողություններ եւ գողության փորձեր են արել:

Մասնավորապես, անցած տարվա նոյեմբերի 28-ին փորձել են ամրաններ գողանալ մայրաքաղաքի Արշակունյաց պողոտայի մի շինհրապարակից, սակայն, իրենց կամքից անկախ, հանցագործությունն ավարտին չեն հասցրել: Հաջորդ երեք դեպքերում՝ դեկտեմբերի 1-ին, այս տարվա հունվարի 25-ին ու մարտի 3-ին՝ միշտ առավոտյան ժամը 6-ի սահմաններում, նույն շինհրապարակից գողացել են ամրաններ:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ գողոնը հատնաբերելու ուղղությամբ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՏՈՒՆԸ ԱՅՐՎԵԼ Է

Ապրիլի 5-ին՝ ժամը 02:49-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Սեւքարեցի Սաքոյի փողոցի տներից մեկի տանիքում:

ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնում են, որ դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից երկու մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ այրվում է երկհարկանի տուն:

Հայտարարվել է հրդեհի բարդության «1 ԲԻՍ» կանչ. դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից երկու մարտական հաշվարկ, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ խումբը, Հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժնի եւ Բժշկական ապահովման վարչության հերթապահ խմբերը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 04:23-ին, մարվել՝04:33-ին: Այրվել են երկհարկանի տունը (մոտ 70 քմ, չբնակեցված) եւ կից տան բաց պատշգամբի տանիքի փայտե կառուցատարրերից մոտ 2 քմ հատված:

ԼՈՒՐԵՐ

ԱՀԱՋԱՆԳԵՐ

Ապրիլի 5-ին՝ ժամը 00:53-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել էր, որ Վրացական փողոցի եւ Կոմիտասի պողոտայի խաչմերուկում լսվում են վիճաբանության եւ հայհոյանքի ձայներ:

Ժամը 01:00-ին օպերատիվ կառավարման կենտրոն վիճաբանության մասին հաջորդ զանգը հնչեց, իսկ ժամը 01:35-ին հիվանդանոցից ահազանգ ստացվեց. մարմնի տարբեր հատվածներում կտրածծակած վերքերով բյուրեղավանցի 32-ամյա երիտասարդ էր բուժօգնության տեղափոխվել:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզների եւ ՊԾ Երեւան քաղաքի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Նաիրի Զարյան փողոցի հասցեներից մեկի մոտ հայտնաբերվել, խուլիգանության, գողության եւ սառը զենք կրելու հիմնավոր կասկածանքով ձերբակալվել եւ ոստիկանության Արաբկիրի բաժին են տեղափոխվել 32 եւ 29 տարեկան երկու երիտասարդ:

32-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է գաղտնի փականով ծալովի դանակ՝ 18 սմ ընդհանուր երկարությամբ, շեղբի երկարությունը՝ 8 սմ: 29-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ նույնպես հայտնաբերվել է գաղտնի փականով ծալովի դանակ՝ 16 սմ ընդհանուր երկարությամբ, շեղբի երկարությունը՝7սմ:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ապրիլի 5-ի ժամը 00:20-ի սահմաններում անձնական հարցերի շուրջ վիճաբանել են բյուրեղավանցի եւ Երեւանի մի խումբ երիտասարդներ, որի ընթացքում վնասել են բյուրեղավանցիներից մեկի «Պեժո» մակնիշի մեքենան, ապա կտրող-ծակող առարկաներով ու մահակով հարվածներ են հասցրել բյուրեղավանցի երկու երիտասարդների՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Երեւանցի երեք երիտասարդները եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ մյուս մասնակիցներին հայտնաբերելու ուղղությամբ:

ԿԱ 1 ԶՈՀ ԵՎ 1 ՎԻՐԱՎՈՐ

Արգածոտնի մարզում երեկ՝ապրիլի 5-ին, խոշոր ու ողբերգական ավտովթար է տեղի ունեցել:

Ժամը 11:00-ի սահմաններում Աշտարակ-Ապարան ավտոճանապարհի 4-րդ կմ հատվածում՝ Կարբի գյուղի վարչական տարածքում, բախվել են Mercedes մակնիշի ավտոմեքենան եւ Iveko մակնիշի բեռնատարը:

Վթարի հետեւանքով 1 հոգի տեղում մահացել է:

Օպերատիվորեն ժամանել են նաեւ «Աշտարակ» բժշկական կենտրոնի բժիշկների հեթապահ խումբը, որը բեռնատարի վարորդին նախ տեղում առաջին բուժօգնությունն են ցուցաբերել, ապա տեղափոխել են «Աշտարակ» բժշկական կենտրոն:

Վթարի փաստով Արագածոտնի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանությունն ու քննչական վարչությունը պարզում են վարորդների եւ մահացածի ինքնությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 4-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 68 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ նրան հարցադնում անելով, որ, ըստ կառավարության հաստատած չափորոշիչի, բժշկական շտապ օգնության բրիգադների ձեւավորումն իրականացվում է յուրաքանչյուր 20 հազար բնակչին մեկ բրիգադ սկզբունքով, Նոյեմբերյանի, Իջեւանի, Դիլիջանի, Բերդի բժշկական կենտրոններից յուրաքանչյուրում միաժամանակ շտապ օգնության քանի բրիգադ է արդյոք գործում: Մարզպետարանից ստացված գրավոր պատասխանում նշված է. «Իջեւանի, Նոյեմբերյանի, Բերդի եւ Դիլիջանի «Իռ-Վիգ» բժշկական կենտրոններից յուրաքանչյուրում գործում է շտապ օգնության 1 բրիգադ: Հիվանդի՝ Երեւան տեղափոխումը իրականացվում է բժշկական կենտրոններում առկա ռեանիմոբիլներով: Բացի 4 բժշկական կենտրոններում գործող շտապ օգնության կայաններից, որոշ գյուղական բժշկական ամբուլատորիաների կամ առողջության կենտրոնների ենթակայության սանիտարական տրանսպորտով (որը կահավորված է անհրաժեշտ սարքավորումներով եւ դեղորայքով) իրականացվում է նաեւ «Ընտանեկան բժշկի կանչ աշխատանքից դուրս» ծրագիրը: Տեղեկացնեմ նաեւ, որ մարզի բժշկական կենտրոնների կազմում գործող 4 շտապ օգնության ծառայությունները գործում են 50 տոկոս ծանրաբեռնվածությամբ»:

Խաղադաշտեր՝ առանց ցանկապատի

2019 թվականին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան Իջեւան խոշոր համայնքի տարածքում կառուցել է մինի ֆուտբոլի 6 խաղադաշտ, սակայն դրանք չի ցանկապատել: Իջեւանի համայնքի ավագանին որոշել է Իջեւան համայնքի 2023 թվականի բյուջեի մի հոդվածից այլ հոդվածի փոխանցել 19 միլիոն 200 հազար դրամ, որը կծախսվի 6 մինի խաղադաշտերը ցանկապատելու նպատակով (յուրաքանչյուր խաղադաշտը ցանկապատելու համար՝ 3 միլիոն 200 հազար դրամ): Հարց է ծագում՝ 2019 թվականին, երբ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան կառուցում էր մինի ֆուտբոլի 6 խաղադաշտերը, Իջեւանի համայնքապետարանը ինչո՞ւ ՀՖՖ-ից չի պահանջել խաղադաշտերից զատ կառուցել դրանց շուրջ ցանկապատեր, անցած 4 տարում այդ մինի խաղադաշտերը ինչպե՞ս են պաշտպանվել Իջեւանում թափառող ընտանի անասուններից, դեգերող, անտեր շներից:

ՓՈԽԱՆՑՎԵՑԻՆ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշխատողները դժգոհում էին, որ 2023 թվականի առաջին 3 ամիսների համար իրենց սոցիալական փաթեթների գումարները պետական բյուջեից չեն փոխանցվել: Այդ խնդիրը գոյություն ուներ նաեւ քաղաքացիական ծառայողների պարագայում: Տեղեկացա, որ մի քանի օր առաջ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշխատողների, մարզի քաղաքացիական ծառայողների սոցիալական փաթեթները գումարները՝ նախատեսված 2023 թվականի հունվար, փետրվար եւ մարտ ամիսների համար, փոխանցվել են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳՈՐԻՍ-ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Չնայած վերադարձի վերաբերյալ նախնական ձեռք բերված պայմանավորվածությանը՝ Շուշիի հատվածում՝ Գորիս-Ստեփանակերտ մայրուղու արգելափակված մասում, «էկոակտիվիստ» ձեւացող ադրբեջանական կառավարական գործակալները արգելափակել են քաղաքացիական անձանց տեղափոխող ռուսական խաղաղապահ ուժերի մեքենաների անցումը: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը՝ մանրամասներ հայտնելով քիչ առաջ տեղի ունեցած միջադեպից, երբ ադրբեջանցիներն արգելել են խաղաղապահների ուղեկցությամբ 27 արցախցիների մուտքն Արցախ:



«Մի քանի ամիս ընտանիքներից բաժանված թվով 27 քաղաքացիական անձինք, այդ թվում՝ տարեցներ, երեխաներ եւ հաշմանդամություն ունեցող անձինք, ռուսական կողմի հետ ձեռք բերված համաձայնությամբ եւ ռուսական խաղաղապահների ուղեկցությամբ, ապրիլի 4-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Հայաստանի Հանրապետության Գորիս քաղաքից ուղեւորվել են դեպի Ստեփանակերտ:

Չնայած վերադարձի վերաբերյալ նախնական ձեռք բերված պայմանավորվածությանը՝ Շուշիի հատվածում՝ Գորիս-Ստեփանակերտ մայրուղու արգելափակված մասում, «էկոակտիվիստ» ձեւացող ադրբեջանական կառավարական գործակալները արգելափակել են քաղաքացիական անձանց տեղափոխող ռուսական խաղաղապահ ուժերի մեքենաների անցումը: Դրա հետեւանքով քաղաքացիները այդ հատվածում են մնացել շուրջ 5 ժամ: Ռուսական կողմի եւ ադրբեջանցիների միջեւ անարդյունք բանակցություններից հետո մեքենաները այժմ վերադառնում են Գորիս:

Ըստ տեղեկությունների՝ որոշ ադրբեջանցիներ նույնիսկ ներխուժել են սպասող մեքենաներից մեկը: Սպասման ու բանակցությունների ընթացքում քաղաքացիական անձանցից 4-ի ինքնազգացողությունը վատացել է, նրանցից 3-ը ուշաթափվել են: Ռուսական խաղաղապահների ուղեկցությամբ նրանք տեղափոխվել են Ստեփանակերտի հանրապետական բժշկական կենտրոն: Մյուս քաղաքացիական անձինք՝ թվով 23 հոգի, հետ են վերադառնում Գորիս:

114 օր շարունակվող շրջափակման առաջին օրից ադրբեջանական կողմը տարբեր հարթակներում հայտարարում է, որ ճանապարհը բաց է քաղաքացիական անձանց եւ բեռների փոխադրման համար՝ ուղիղ կասկածի տակ դնելով ոչ միայն հայկական կողմի հիմնավոր պնդումները, այլ նաեւ միջազգային բազմաթիվ դերակատարների դիրքորոշումներն ու հայտարարությունները, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի 2023 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ արձանագրված իրողությունը:

Գրանցված դեպքը հավելյալ անգամ ապացուցում է ադրբեջանական ղեկավարության կեղծ եւ շինծու պնդումների ողջ էությունը, միջազգային հանրությանը ակնհայտ եւ անթաքույց ստելու եւ մոլորեցնելու գործելաոճը:

Ավելին՝ տարբեր ձեւերով թույլ տալով Արցախից մարդկանց ելքը, բայց արգելելով մուտքը՝ ադրբեջանական իշխանությունները բացահայտորեն իրականացնում են էթնիկ զտման քաղաքականություն, ինչպես հերթական անգամ խոստովանել էր Իլհամ Ալիեւը հունվարի 10-ի հայտարարությամբ:

Վաղուց ակնհայտ է, որ ադրբեջանական կողմի լկտի պահվածքի, միջազգային հանրության կոչերի եւ Արդարադատության միջազգային դատարանի որոշման չկատարելու միակ պատճառը ստեղծված ամենաթողությունն է, խաղաղապահ առաքելության նկատմամբ ցուցաբերվող արհամարհանքն ու միջազգային շահագրգիռ բոլոր դերակատարների կողմից հասցեական ու գործնական պատժիչ գործողությունների բացակայությունը:

Այս պահին Գորիս քաղաքում եւ ՀՀ այլ բնակավայրերում հարյուրավոր քաղաքացիական անձինք ուղղակի զրկված են իրենց ընտանիքներին վերամիավորվելու հնարավորությունից: Ադրբեջանական կողմը, օգտվելով ամենաթողության մթնոլորտից, այս հարցով չի համագործակցում ո՛չ ռուս խաղաղապահների, ո՛չ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ո՛չ էլ այլ միջազգային կառույցների հետ»,- գրել է նա:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ԴԵՂԱՀԱԲԵՐ

Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ապրիլի 4-ին՝ ժամը 04:00-ին, Մամիկոնյանց փողոցում հայտնաբերել, ապօրինի հրազեն ու սառը զենք պահելու եւ կրելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տեղափոխել 23 եւ 21 տարեկան օտարերկրյա երկու քաղաքացիների:

Անձնական խուզարկությամբ 23-ամյա երիտասարդի մոտ հայտնաբերվել են ատրճանակ եւ բարդ փականով ծալովի դանակ, իսկ 21-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են 30 դեղահաբ եւ բարդ փականով դանակ: Երիտասարդները եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ԿԱՐՈՂ ԵՆ ԶՐԿՎԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Ռուսաստանի ՆԳՆ-ն սատարել է «Քաղաքացիության մասին» օրինագծի փոփոխությանը, որը նախատեսում է ձեռք բերված քաղաքացիությունից զրկում ազգային անվտանգության սպառնալիքի դեպքում: Այս մասին Պետդումայի կոմիտեի նիստում հայտարարել է ՌԴ ՆԳՆ Միգրացիայի հարցերով գլխավոր վարչության ղեկավար Վալենտինա Կազակովան. հաղորդում է ՌԻԱ Նովոստին:

Նրա խոսքով՝ փոփոխությունը համաձայնեցված է նախագահի աշխատակազմի եւ Անվտանգության դաշնային ծառայության հետ:

Կազակովան հիշեցրել է, որ քաղաքացիությունը ստանալու դեպքում երդում է տրվում, մարդը պարտավորվում է հետեւել օրենսդրությանը, սիրել Ռուսաստանը, ինչպես նաեւ խոստանում է սպառնալիք չստեղծել ազգային անվտանգության համար:

ՆԳՆ ներկայացուցիչն ընդգծել է, որ պետությունն իրավունք ունի ինչպես տալու Ռուսաստանի քաղաքացիություն, այնպես էլ զրկելու դրանից: Քաղաքացին իրավունք կունենա բողոքարկել դատարանում որոշումը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

ԿՍԱՀՄԱՆՎԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի խորհրդատվական կարծիք ստանալու համար դիմումի ներկայացման ներպետական ամբողջ կառուցակարգը սահմանելու նպատակով Կառավարությունն առաջարկել է լրացում կատարել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում, ինչպես նաեւ Վարչական դատավարության, Քաղաքացիական դատավարության եւ Քրեական դատավարության օրենսգրքերում: Օրենսդրական փաթեթը քննարկվել է ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի ապրիլի 5-ի հերթական նիստում:

ԱԺ մամուլի ծառայության փոխանցմամբ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանը տեղեկացրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրությունը հնարավորություն է տալիս պետության բարձրագույն դատական ատյաններին խորհրդատվական կարծիք ստանալու համար դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Ըստ փոխնախարարի՝ չնայած որ Հայաստանն այդ հնարավորությունից օգտվելու փորձառություն ունեցել է, այդուհանդերձ օրենսդրության մեջ համապատասխան ընթացակարգեր նախատեսված չեն: Հանձնաժողովի քննարկմանը ներկայացված օրենսդրական փաթեթով առաջարկվում է նախատեսել Սահմանադրական դատարանի եւ Վճռաբեկ դատարանի կողմից խորհրդատվական կարծիք ստանալու համար Մարդու իրավունքների եվրոպական դատարանին դիմելու ընթացակարգային կանոնները: Առաջարկվում է սահմանել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դատավորի կողմից խորհրդատվական կարծիք ստանալու առաջարկություններ կայացնելու հնարավորության, խորհրդատվական կարծիք ստանալու խնդրանքին ներկայացվող պահանջներն ու փոխգործակցություն ապահովող անձի վերաբերյալ կարգավորումները:

Պատասխանելով պատգամավորների հարցերին՝ փոխնախարարը տեղեկացրել է, որ մինչեւ այսօր ՄԻԵԴ-ը երկու խորհրդատվական կարծիք է տրամադրել՝ առաջինը՝ 2022 թվականի մայիսի 29-ին՝ Սահմանադրական դատարանի, մյուսը՝ 2022 թվականի ապրիլի 26-ին՝ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա: Անդրադառնալով ՄԻԵԴ դիմելու կարգին վերաբերող հարցին՝ Արմենուհի Հարությունյանը նշել է, որ խորհրդատվական կարծիք ստանալու առաջարկությամբ, ըստ ներկայացված նախագծի, կարող է դիմել յուրաքանչյուր դատավոր, ինչի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը պետք է կայացնի որոշում:

Հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել առաջին ընթերցմամբ քննարկված օրենսդրական փաթեթին:

ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՓԵՏՈՒՐՆԵՐԸ ԾԱՎՈՒՄ ԵՆ

Իսրայելում Թուրքիայի դեսպանը բողոքել է Հայֆայում հրապարակներից մեկը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին անվանակոչելու դեմ: Իսրայելի հյուսիսային քաղաքը, որտեղ ապրում են բազմաթիվ էթնիկ հայեր, երկրի առաջին համայնքն է, որն այսկերպ ճանաչում է Առաջին համաշխարհային պատերազմի վայրագությունները: Անվանափոխությունն ուժի մեջ է մտել մարտի 20-ից:

«Նախաձեռնությունը սպառնում է վատթարացնել կապերը, որոնք Իսրայելի եւ Թուրքիայի ժողովուրդներն ու կառավարությունները ցանկանում են բարելավել»,- գրել է Շաքիր Օզքան Թորունլարը Հայֆայի քաղաքապետ Էյնաթ Կալիշ-Ռոտեմին ուղղված նամակում:

Պարբերականն ակնարկում է, որ մոտենում է ապրիլի 24-ը՝ Հայոց ցեղասպանության տարելիցը, եւ Թորունլարի բողոքը հիշեցնում է, թե Թուրքիան՝ որպես մուսուլմանական մեծամասնություն ունեցող պետություն, որքան զգայուն է խնդրի նկատմամբ Իսրայելի հետ առանց այն էլ բարդ հարաբերություններում: Իսրայելում Հոլոքոստի պատճառով շատերը ապրումակցում են հայկական փորձությանը:

Թորունլարն իր նամակում քաղաքապետից պահանջել է չեղարկել հրապարակի անվանակոչմամբ Ցեղասպանությունը ոգեկոչելու որոշումը եւ կրկնել է Թուրքիայի մերժողական դիրքորոշումը՝ նշելով, որ «նման ցեղասպանություն թուրք ազգի պատմության մեջ երբեք չի եղել»:

Իսրայելի մեծությամբ երրորդ քաղաք Հայֆայում բնակվում է երկրի 15 000 էթնիկ հայերի գրեթե կեսը, եւ քաղաքի Բեն Գուրիոնի պողոտայի երկայնքով Հայոց ցեղասպանության հրապարակի բացումը երկրորդ դեպքն է, երբ Իսրայելի տեղական իշխանությունն ընդունում է վայրագությունները: 2020 թվականին Թել Ավիվի մերձակայքում գտնվող Պետահ Տիկվայում բացվեց զոհերի հուշարձանը, որը հետագայում անվանվեց Շառլ Ազնավուրի անվան զբոսայգու:

Հայֆայի քաղաքապետարանի գլխավոր խոսնակ Էլիրան Թալն անվանակոչումը համարել է կառավարության համար օրինակ, որին պետք է հետեւել: «Մեզ մնում է միայն հուսալ, որ Իսրայելի Պետությունը կճանաչի Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանությունը, որը խլեց 1,5 միլիոն հայերի կյանքը»,- գրել է նա: Թուրք դիվանագետները, հավելել է նա, «շատ են աշխատել, որպեսզի ճնշում գործադրեն» քաղաքի վրա՝ հրաժարվելու ծրագրից»:

Պարբերականը նկատել է նաեւ, որ վերջին տարիներին ճանաչման նոր խոչընդոտ է ի հայտ եկել՝ Իսրայելի կապերի խորացումն Ադրբեջանի հետ՝ նավթով հարուստ երկիր, որն ամուր կապեր ունի Թուրքիայի հետ եւ սահմանակից է Իրանին:

Team Telecom Armenia

PUBG Mobile-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Ավարտվեց PUBG Mobile-ի Հայաստանի գավաթի առաջնությունը. հաղթող թիմը կմասնակցի որակավորումների տարածաշրջանային փուլին:

PUBG Mobile գավաթ 2023-ն իրականացվել է Team Telecom Armenia-ի, Հայաստանի կիբերսպորտի ֆեդերացիայի եւ ArLeAM ընկերությունների համագործակցությամբ:

Երկու օր տեւած որակավորման առցանց փուլին մասնակցել են 30 թիմեր, որոնցից միայն 16-ին է հաջողվել հասնել եզրափակիչ փուլ: Եզրափակիչ փուլը տեղի ունեցավ Team Telecom Armenia-ում օֆլայն ձեւաչափով: Մի քանի ժամ տեւած համառ պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեց BX Brothers-ը՝ ստանալով տարածաշրջանային, իսկ հաջողելու դեպքում՝ նաեւ Ռումինիայի Յաշի քաղաքում անցկացվելիք World Esports Championship 2023-ին մասնակցելու հնարավորություն:

«PUBG Mobile-ը Հայաստանում ամենամեծ տարածում եւ ճանաչում ունեցող խաղերից է: Այս մրցաշարը Կիբերսպորտի ֆեդերացիան անցկացնում է արդեն երկրորդ անգամ, եւ օրեցօր զգում ենք մեծ հետաքրքրվածություն: Մենք ցանկանում ենք օգնել հնարավորինս մեծ թվով հայ կիբերմարզիկների հանդես գալ ու կառուցել իրենց ապագան կիբերսպորտի համաշխարհային հարթակներում»,- ամփոփելով գարնանային մրցաշարի արդյունքները՝ նշեց Հայաստանի կիբերսպորտի ֆեդերացիայի նախագահ Սմբատ Սիրադեղյանը:

Մրցույթի օրը որոշվեց նաեւ մրցաշարի լավագույն խաղացողը, որին Team Telecom Armenia-ն նվիրեց առցանց խաղերի չափանիշներին համապատասխան սմարթ հեռախոս, իսկ հաղթող թիմի բոլոր անդամներին՝ Cosmo փաթեթի մեկ տարվա անվճար բաժանորդագրություն:

«Առցանց խաղերը ինտերնետի համար ամենաբարդ քննությունն են, քանի որ դրա անգամ ամենաչնչին տատանումը կարող է ազդել խաղի արդյունքի վրա: Որպես թիմային խաղերին աջակցող ու Հայաստանում 25 Գբ/վ թողունակությամբ ինտերնետ ցանց ունեցող միակ ընկերություն՝ մենք որոշեցինք PUBG Mobile-ի գավաթի եզրափակիչն անցկացնել մեզ մոտ՝ ապահովելով ինտերնետի հասանելիության հավասար հնարավորություն բոլոր թիմերի համար: Կարծում եմ՝ այսպիսի մրցաշարերի անցկացումը կնպաստի հայկական թիմերի ուժեղացմանը եւ միջազգային խաղային հարթակներում առաջխաղացմանը»,- եզրափակեց ընկերության տնօրեն Հայկ Եսայանը:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը: Առաջիկայում այս ցանցին կմիացվեն Հայաստանի ողջ տարածքում գործող բջջային կայանները, ինչի շնորհիվ զգալիորեն կբարելավվի նաեւ շարժական կապի որակը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է

ԵԶԱԿԻ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ The Beatles-ԻՑ

The Beatles խմբի համերգի ամենավաղ ամբողջական ձայնագրությունը, որը 60 տարվա վաղեմություն ունի, հրապարակվել է Մեծ Բրիտանիայում BBC հեռուստառադիոհաղորդումների կորպորացիայի կողմից: Ձայնագրությունն արվել է 15-ամյա աշակերտ Ջոն Բլումֆիլդի կողմից 1963 թվականի ապրիլի 4-ին՝ Բաքինգեմշիրի կոմսության «Սթոու» մասնավոր գիշերօթիկ դպրոցում ռոք խմբի ելույթի ժամանակ:

Ջոն Բլումֆիլդը ձայնագրությունն ուղարկել է BBC ռադիոկայանի Front Row հաղորդաշարին: Փոլ Մաքքարթնին, Ռինգո Սթարը, Ջոն Լենոնը եւ Ջորջ Հարիսոնը դպրոց են եկել դպրոցի աշակերտ, ազդեցիկ գործարարների ընտանիքի անդամ Դեյվիդ Մուրսի խնդրանքով, որը նամակ էր գրել Լիվերպուլյան քառյակի մենեջեր Բրայան Էփսթայնին: Բլումֆիլդը հայտնել է, որ ելույթը ձայնագրել է իր նոր մագնիտոֆոնով: «Այդ ժամանակ ես ակնթարթորեն հասունացա: Հավանաբար, կկարծեք, թե չափազանցնում եմ, բայց այդ պահին ես հասկացա, որ դա բոլորովին մի այլ մոլորակից է», - ասել է Բլումֆիլդը BBC-ին:

Դպրոցում համերգից երկու շաբաթ առաջ՝ 1963 թվականի մարտի 22-ին, թողարկվել էր The Beatles-ի դեբյուտային ստուդիական ալբոմը՝ Please Please Me-ն, որից կատարումներ են հնչել «Սթոու»-ում: Ձայնագրության մեջ լավ լսվում է երաժշտությունը, չկան երգերն ընդհատող բացականչություններ եւ կողմնակի աղմուկներ, ինչը հատուկ է խմբի մյուս ելույթների ձայնագրություններին: Բլումֆիլդը հիշում է, որ համերգից հետո երաժիշտներին տարել են դպրոցի ճաշարան, այնուհետեւ ցույց են տվել հանրակացարանում Բլումֆիլդի սենյակը: Ապրիլի 3-ին համերգի ձայնագրության մի մասը հնչել է BBC-ի ռադիոեթերում:

Հիթ-շքերթներում առաջին տեղը զբաղեցրած երգերի թվով The Beatles-ը պատմական առաջատարն է ինչպես Մեծ Բրիտանիայում, այնպես էլ ԱՄՆ-ում: Խումբն արժանացել է «Գրեմմի»-ի 10 մրցանակի, իսկ Time ամսագիրը խմբի անդամներին ներառել է 20-րդ դարի ամենաազդեցիկ անձանց թվում: Rolling Stone հանդեսը The Beatles-ին հատկացրել է առաջին տեղը բոլոր ժամանակների մեծագույն կատարողների ցուցակում: Աշխարհում լիվերպուլյան քառյակի վաճառված ալբոմների կրկնօրինակների թիվը գերազանցել է 600 միլիոնը: Խումբը գոյություն է ունեցել 1960-ից մինչեւ 1970 թվականը, որից հետո դադարեցրել է գոյությունը, իսկ չորս երաժիշտներից յուրաքանչյուրը սկսել է սեփական կարիերան: Այժմ բիթլներից ողջ են Փոլ Մաքքարթնին եւ Ռինգո Սթարը: Ջոն Լենոնը վախճանվել է 1980 թվականին Նյու Յորքում մոլի երկրպագուի արձակած գնդակից, իսկ Ջորջ Հարիսոնը մահացել է 2001 թվականին՝ քաղցկեղի դեմ երկարատեւ պայքարից հետո:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ՆՈՐ ՊՐԵՄԻԵՐԱ՝ «ՀԱՐՍԱՆԵԿԱՆ Ping Pong»

«Հարսանեկան Ping Pong» ներկայացման հերոսներն են Գրիգը, Լարան, Մարան, Էվան եւ Ռոբը, որոնք հայտնվում են խճճված եւ զավեշտալի իրավիճակում, ինչն էլ նրանց ստիպում է ստել միմյանց, տարբեր դերեր խաղալ ճշմարտությունը կոծկելու համար: Ռեժիսոր Արշո Հարությունյանի բեմադրությամբ կատակերգության առաջնախաղը տեղի ունեցավ ապրիլի 4-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում: Նախագծի պրոդյուսերներ Տիգրան Վիրաբյանն ու Արման Միտոյանը վաղուց են համագործակցում եւ կարողանում են իրենց շուրջ համախմբել տաղանդավոր ստեղծագործողների:

«Իմ սիրած դերասաններն են բեմադրության մեջ զբաղված: Փորձերի ընթացքում հասկացանք, որ ստեղծագործական խումբը կամաց-կամաց վերածվում է լավ ընտանիքի, եւ այսօր կարողացան ապացուցել, որ սիրում են, գնահատում են իրենց աշխատանքը: Հանդիսատեսի բուռն արձագանքն ապացուցեց, որ չենք սխալվել պիեսի, դերասանների ընտրության հարցում»,-պատմում է Վիրաբյանն ու ընդգծում՝ պիեսը տարբեր պատմություններից է հավաքված:

Այն հարմարեցրել ու թարգմանել է Բաբկեն Չոբանյանը՝ բառամթերքով, խոսույթով ու կերպարներով հայկական դարձնելով: Պրոդյուսերը վստահ է՝ներկայացումը երկար կյանք կունենա: Արդեն շրջագայելու առաջարկներ են ստացել: Ներկայացման մեջ խաղում են երիտասարդ ու ավյունով լի դերասաններ Լեւոն Հախվերդյանը, Գոռ Հակոբյանը, Իննա Խոջամիրյանը, Անի Խաչիկյանը, Մանե Միխոյանը:

ԼՈՒՐԵՐ

«ՇՐԵԿ»-Ը ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ Է

«Շրեկ» անիմացիոն ֆիլմի հինգերորդ մասը մշակման փուլում է: Տեղեկությունը հաստատել է Illuշination կինոստուդիայի տնօրեն Քրիստոֆեր Մելեդանդրին, որը հանդես է գալիս որպես ժապավենի պրոդյուսեր: Մասնագետի խոսքով՝հավանական է, որ սկզբնական դերասանական կազմը կվերադառնա աշխատանքի: Խոսքն առաջին հերթին գլխավոր հերոսներին հնչյունավորող Քեմերոն Դիասի, Մայք Մայերսի եւ Էդի Մերֆիի մասին է:

«Բանակցություններն արդեն սկսվել են, եւ այս փուլում ամեն ինչ խոսում է այն մասին, որ մեր աստղերը մեծ ոգեւորություն են ցուցաբերում այս հնարավորության համար»,- հայտարարել է Մելեդանդրին: Շրեկի հնարավոր վերագործարկման մասին խոսակցությունները շրջանառվում են մի քանի տարի: Միեւնույն ժամանակ, մեկ այլ մուլտֆիլմի հաջողությունը՝ «Կոշկավոր կատու 2. վերջին ցանկությունը», կարող է ստեղծողներին մղել գործողությունների: Վարձույթի ողջ ընթացքում այն վաստակել է մոտ 500 մլն դոլար:

ՌՈՄԱՆՏԻԿ ԶԲՈՍԱՆՔ

Մոդել Քենդալ Ջեններին ու ռեփեր Bad Bunny-ին լուսանկարել են ձիերով ռոմանտիկ զբոսանքի ժամանակ: Անցած շաբաթավերջին 27-ամյա Քենդալ Ջեններն անցկացրել է 29-ամյա ռեփեր Bad Bunny-ի ընկերակցությամբ: Զույգը հայտնվել է պապարացիների տեսախցիկների առջեւ Hidden Hills ձիասպորտի կենտրոնում զբոսնելիս: Նրանք միասին թամբել են մեկ ձի, մոդելը նստել է առջեւի հատվածում եւ սելֆի արել, իսկ նոր բոյֆրենդը գրկել է նրան հետեւից եւ բռնեց սանձը: Քենդալը կրում էր սպիտակ կրոպ տոպ, ջինսեր եւ երկարաճիտներ: Մոդելը կերպարը համադրել է գլխարկի հետ, իսկ կոնքերին կապել է վանդակավոր վերնաշապիկ: Քենդալ Ջեների եւ ռեփեր Bad Bunny-ի սիրավեպի մասին առաջին անգամ հայտնի դարձավ 2023 թվականի մարտին, երբ նրանք միասին ներկա գտնվեցին Բեյոնսեի եւ Ջեյ Զիի կողմից կազմակերպված «Օսկար»-ի երեկույթին:

ԿԸՆԴՈՒՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 35-ամյա հարձակվող Լիոնել Մեսին կընդունի Սաուդյան Արաբիայի «Ալ Հիլյալի» առաջարկը. հաղորդում է TodoFichajes-ը, որի տվյալներով՝ ֆուտբոլիստն իր որոշման մասին արդեն հայտնել է ընտանիքի անդամներին եւ ընկերներին: «Ալ Հիլյալ»-ը ցանկանում է Մեսիի հետ կնքել երեք տարվա պայմանագիր, որով ֆուտբոլիստի ընդհանուր եկամուտը կկազմի մոտ 1,2 միլիարդ եվրո: Մեսիի պայմանագիրը ՊՍԺ-ի հետ կավարտվի հունիսին: տը նրա տրանսֆերային արժեքը գնահատում է 45 միլիոն եվրո: Մեսին այս մրցաշրջանում ՊՍԺ-ի հետ մասնակցել է 33 հանդիպման, խփել է 18 գոլ, կատարել է 17 գոլային փոխանցում:

● *Ապրիլի 6-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Բրեմենյան երաժիշտները» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000 դրամ: Սկիզբը՝ժամը 14:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչով են պայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները:

Հայկուհի Պետրոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են:

Համապատասխանաբար, ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը: Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող է փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, Կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները: Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ՝կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժեքավորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (երբ, օրինակ, ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում ձեւավորված դրամի միջին փոխարժեքը հրապարակվում է որպես հաշվարկային միավոր ՀՀ ԿԲ-ի համար եւ, ըստ ցանկության, կարող է օգտագործվել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ով իրավունք ունի դիմելու եռամսյակային հրատապ օգնություն ստանալու համար:

Պերճուհի Հակոբյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պ. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եռամսյակային հրատապ օգնության իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք չունեցող, անապահովության «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքը անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում (արտակարգ իրավիճակների եւ կարճատեւ ֆինանսական խնդիրներ ունենալու) հայտնվելու դեպքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ եռամսյակային հրատապ օգնությունը նշանակում է սոցիալական աջակցություն տրամադրող տարածքային մարմինը՝ համակարգող խորհրդի առաջարկության հիման վրա: Եռամսյակային հրատապ օգնությունը նշանակվում է սոցիալական նպաստի չափով երեք ամիս ժամկետով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Արթիկում

Շիրակի մարզում տեղի է ունեցել Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության վերանորոգված կենտրոնի բացման արարողությունը: Կենտրոնը վերանորոգվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության համագործակցությամբ՝ «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 4 + 9 + 13
Կոտայքի լեռներ	+ 1 + 3 + 9 + 11
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8 +14 +16
Գեղարքունիք	0 + 4 + 9 + 11
Լոռի	+ 1 + 5 +12 + 14
Տավուշ	+ 4 + 9 +14 + 17
Արագածոտնի լեռներ	+ 9 + 11 +20 + 22
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 10 +19 + 21

Արարատ	0 + 2 +10 + 12
Արմավիր	+ 7 + 11 +18 + 21
Վայոց ձորի լեռներ	9 + 13 +23 + 26
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6 +14 + 18
Սյունիքի հովիտներ	+ 8 + 9 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 7 +17 + 20
Արցախ	+ 8 + 11 +18 + 22
Երեւան	+ 8 + 10 + 18+ 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.04.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*